

Պարզապես վերցրո՛ւ Աստծո խոսքն ու հռչակի՛ր Իր փրկությունը հավատքով: Հավատա՛, ու կփրկվես: Ո՛չ եկեղեցին, ո՛չ խմբակը, ո՛չ բարի գործերը չեն կարող քեզ փրկել: Հիշի՛ր՝ Աստված է փրկողը: Ամենքի:

Աստծո փրկության պարզ ծրագիրը սա է. Դու մեղավոր ես: Հետևաբար, մինչև չհավատաս Հիսուսին, որ մահացավ Քեզ համար, կանցկացնես հավիտենությունը դժոխքում: Եթե հավատում ես Նրան՝ որպես քո խաչված, թաղված ու հարություն առած Փրկչի, ապա հավատքով ստանում ես քո գործած բոլոր մեղքերի համար թողություն ու հավիտենական փրկության Իր նվերը:

Դու միգուցե ասես. «Անկասկած, այն չի կարող այսքան պարզ լինել»: Այո՛, այն այսքան պարզ է: Այն սուրբգրային է: Դա Աստծո ծրագիրն է: Իմ ընկեր, հավատա՛ Հիսուսին ու այսօր ընդունի՛ր Նրան որպես քո Փրկչի:

Եթե Նրա ծրագիրը քեզ համար կատարելապես հստակ չի, կրկին ու կրկին կարդա՛ այս թերթիկն առանց վայր դնելու, մինչև կհասկանաս այն: Քո հոգին արժեքավոր է ավելի, քան ամբողջ աշխարհը: **«Ի՞նչ օգուտ, եթե մարդ ամբողջ աշխարհը շահի, բայց իր կյանքը կորցնի»** (Մարկոսի 8:36):

Վստա՛հ եղիր, որ փրկված ես: Եթե կորցնես հոգիդ, Դու բաց կթողնես երկինքը ու կկորցնես ամեն բան: Խնդրո՛ւմ եմ: Թո՛ւյլ տուր, որ Աստված փրկի Քեզ հենց այս պահին:

Աստծո զորությունը կփրկի քեզ, քեզ փրկված կպահի ու կզորացնի քեզ, որ հաղթական քրիստոնեական կյանքով ապրես: **«Այն փորձությունները, որ դուք կրեցիք, մարդկային սահմաններից դուրս փորձություններ չէին: Բայց վստահեցե՛ք Աստծուն. Նա թույլ չի տա, որ ձեր կարողությունից ավելի փորձության ենթարկվեք, այլ փորձության մեջ անգամ ձեզ ցույց կտա այն հաղթահարելու միջոցը, որպեսզի կարողանաք համբերել»** (Ա Կորնթացիներին 10:13):

Մի վստահի՛ր քո զգացմունքներին: Դրանք փոփոխական են: Կանգնի՛ր Աստծո խոստումների մեջ: Նրանք երբեք չեն փոխվում: Քո փրկվելուց հետո երեք կետեր կան, որ եթե կիրառես ամեն օր, կանես հոգևորապես.

- Աղոթի՛ր - Դու խոսում ես Աստծո հետ:
- Կարդա՛ քո Աստվածաշունչը - Աստված խոսում է քեզ հետ:
- Վկայի՛ր - Դու խոսում ես Աստծո մասին:

Դու պետք է մկրտվես՝ ի նշան հնազանդության Տեր Հիսուս Քրիստոսին՝ որպես քո փրկության հանրային վկայություն, և ապա առանց հապաղելու պետք է միանաս Աստվածաշնչին հավատացող որևէ եկեղեցու: **«Մի՛ վախեցիր մեր Տիրոջ համար վկայություն տալուց... »** (Բ Տիմոթեոսին 1:8):

«Ով որ մարդկանց առջև դավանի, թե հետևում է ինձ, ես էլ նրա՛ն ինձ հետևողդ պիտի դավանեմ Հորս առջև, որ երկնքում է» (Մատթեոսի 10:32):